«Շատ վտանգաւոր է ձեզ, կ'ասէր, այդչափ փող հետերնիդ, առանց վտանգի Կամենիից մտնելը».— և կը խոստանար ինքն այդ փողերը անձամբ բերել և իրենց յանձնել։ Ա.յլ՝ զգաստ միանձունք այդ շահախնդրին ծուղակին մէջ չընկան. և միւս օր՝ առտու կանուխ՝ մինչդեռ սրտացաւ խորհրդատուն 'ի քուն կը խորդար, կամացուկ ելան գնացին ճամբանին։ Փետրուարի երկուքին՝ յետ շատ սրբտագող քաշելու՝ հասան միանձունք 'ի Կամենից, և Ռոշաց կոչուած դռնէն ներս մտան. պահապանք քաղաքին՝ արգիլեցին նոցա՝ որ բերդերուն վրայ շատ չնային, այլ շուտով անցնին։ Գերեալ քրիստոնեայք լսելով միանձանց գալուստը, սրտերնին կռահեց, և անպատմելի ուրախութեամբ լեցուեցան. իսկ պահապանքն տեսնելով այդպիսի տարօրինակ երևոյթն, կը զարմանան։ «Սոքա կախարդք պէտք է լինին, կը փսփսար ամբոխն, գրպաններին լեցուն ստակ, առանց պահապանաց՝ անկարելի բան էր քաղաք մտնալը»։ Քաղաքին չընկոցը հասաւ Փաշային ականջը, հրամայեց որ բանտարկուին եկաւորներն. այլ Փաշային մերձաւորներէն մէկը գիտնալով նոցա նպատակը, խօսք անցուց Փաշային, ու ինքը մի այլ ուրացող աղայ հետը առած, գնաց միանձանց ցուցընելու արգելական գերիները։ Երբ երեկոյեան դէմ միանձունք մտան գերեաց մօտ, մորմոքեցաւ տրորեցաւ սրբտերնին, տեսնելով նոցա ցաւալի վիճակը, մանաւանդ երբ կը մտածէին որ իրենց քով գտնուած փողը, հազիւ գերեաց տասներորդ մասին ազատութեան փրկանքի կը բաւէր։ Գերեվարք 'ի սկզբան մեծամեծ գիներ կը պահանջէին. մանկամարդ կնոջ փրկանք՝ փոքր երեխայիւ 'ի միասին՝ 1000